

լիս հայ ամապրի սուղ էջերն ու պայմանները: Սակայն այդ-
քանից էլ կարելի է եզրակացնել, որ հեղինակը բացարձակ հա-
մակրանք է ցոյց տալիս դէպի հայ ժողովուրդը, միևնոյն ժա-
մանակ դուրս չը գալով անաչառութեան շրջանակից:

Հէնց այդ միևնոյն անաչառութեան ձգտումն է, որ նրան
ստիպել է ցոյց տալ, թէ թիւրքերն էլ ամբողջապէս բարբարոս ու
զազանաբարոյ ժողովուրդ չեն, թէ նրանց մէջ էլ կան ազնիւ
ձգտումների, բարի սրտի տէր մարդիկ:

Նա համակրելի գծերով դուրս է բերում Էդհէմ փաշային
և նրան էլ ստիպում է խօսել հայերի, հայկական խնդրի մասին
— իհարկէ, զուտ թիւրքական տեսակէտից:

Բացի այդ բոլորից՝ պ. Լինդաու աշխատել է իր համոզ-
մունքի համեմատ պատկերացնել «դժբախտ ժողովրդի» ներկայի
հետ կապուած քաղաքականութիւնը—մեծ պետութիւնների
վերաբերմունքը, որից մեծ կախում ունի և ապագան...

Ծիշտ է, նրա գրուածքն ունի մի քանի թերութիւններ ու
սխալներ, բայց դրանք չառ չնչին, չառ աննշան են միւս առա-
ւելութիւնների, չօգտփած գաղափարի, արծարծած հումանիտար
մտքերի համեմատութեամբ:

Ե. ԹՈՓՉԵԱՆ

Ղ. Աղայեան. ՊԵՏԳԵՐԱՌՈՐ ԱՅԲԵՆԱՐԱՆ. Թիֆ., 1903. Թ., 8°, 36 էր., գ. 13 կ.

Վաղուց է որ մեր ժողովրդի ընդարձակ խաւերի համար
զրոյ հեղինակները ամեն յարմար առթի կրկնում են, որ ժա-
մանակիս լաւագոյն զաղափարներն ու գործնական գիտութիւն-
ները մեծ դժուարութեամբ են թափանցում մեր գիւղացիների
ու արհեստաւորների մէջ գլխաւորապէս այն պատճառով, որ
գրագէտների թիւը ժողովրդի այդ դասակարգերում շատ սահ-
մանափակ է: Անկասկած, այն միջոցների մէջ, որով մեր ին-
տելիգենցիան կարող է մաքառել այն աղգալործան չարիքի
դէմ, առաջին տեղն է բռնում մանկավարժական նորագոյն րա-
կգրուներով կազմուած հանրամատչելի այբբենաբանը, այդ հա-
մամարդկային բարիքը, որից դժբաղդաբար զուրկ է մեր խեղճ
ժողովուրդը, ինչպէս գրում է իր վերջին դրքոյի («Բուն և ե-
րազ») մէջ բժ. Ա. Բուդուզեանը, հրաւիրելով ձեռնհաս մարդ-
կանց հազարներով տարածել ժողովրդի մէջ մի կոպէկանոց «այ-
բուբէն»: Այս հատուկացած պահանջին բաւարարութիւն տալ
յանձն է առել մեր տաղանդաւոր մանկական զրոյ Ղազ. Աղա-
յեանը:

Այս տարին Ղ. Աղայեանի գրական գործունէութեան մէջ կ'ուզենայինք վերածնութեան տարի համարել. բանն այն է, որ երկարատեւ ավութիւնից յետոյ նրա գրիչը այս տարի տուել է հասարակութեանը երկու վերին աստիճանի ցանկալի արտագրութիւն—«Մայրենի լեզու» դասագրքի Գ. մասը հիմնովին բարեփոխուած և ճոխացրած և նորերս հրատարակուած «Պատկերաւոր Այբբենարանը», որի ամեն մի էջը կրում է ինքնօրինական բանաստեղծական դրոշմ: Կարծես Աղայեանի տաղանդը զարթնել է մաշող նիրհից և ուզում է ապացուցանել, որ զեռ մարած չէ այն նուրբ ճաշակն ու հոտառութիւնը, որը նրան միշտ մի յատուկ ընդունակութիւն է չնորհել լիաձեռն օգտուելու ժողովրդական բանահիւսութեան զանձերից մանկական գրականութեան համար: Մեզ համար քաղցր կը լինէր այն յոյսը տաճել թէ այս բանաստեղծական արթնութիւնը յարատեւ կը լինի:

«Պատկերաւոր Այբբենարանի» լոյս տեսնելը մենք ողջունում ենք ամենայն փրօվ, որովհետեւ այս ձեռնարկը, համեմատած մեր՝ մինչև այժմ՝ ունեցած նոյն տեսակ աշխատութիւնների հետ, մեծամեծ առաւելութիւններ է ներկայացնում շատ տեսակէտներով: Աղայեանը ունի այլևս մի ուրիշ այբբենարան, որը կցուած է «Մայրենի լեզուի» Ա. մասին: Այդ առաջին փորձը հիմնուած է բոլորովին տարբեր սկզբունքի վրայ, քան թէ նոր աշխատութիւնը: Այնտեղ նա սկսում է՝ աշակերտներին բերան անել տալով մի ոտանաւոր («Մարտը տալիս է ձնծաղիկ» կային), հնչիւնական եղանակով վերլուծում է հետզհետէ երգի բառերը, առանձնացնում է հնչիւնները և յաջորդաբար տալիս է բոլոր հնչիւնների գրերը, հետեւելով այն դասաւորութեանը, որ թելադրում են ոտանաւորի բառերը: Գրերի յաջորդականութիւնը այդպիսով հնազանդուած է պատահական զուգարդագութեանը և ոչ թէ մանկավարժական պահանջներին, որոնք աչքի առաջ ունեն նրանց հնչիւնարանական ու գծագրական կաղմութեան դժուարութիւնները. սրանով է բացատրւում այն հանդամանքը, որ գրքի հէնց երկրորդ երեսին Աղայեանը տալիս է այնպիսի դժուար արտասանելի ու բարդ գծագրութիւն ունեցող տառեր, ինչպէս են ծ, ն, ծ, ղ, (ձնծաղիկ): Ամեն մի նոր տառի հնչիւնը ուսուցիչը ինքն է տալիս աշակերտին, և վերջինս չէ կարող ինքնուրոյն կերպով գտնել տառի այդ նշանակութիւնը, առանց ուրիշի օգնութեան: Ամեն մի տառի տակ ընթերցանական վարժութիւնների համար տուած բառերի թիւը չափազանց քիչ է, իսկ «Մարտը տալիս է ձնծաղիկ» ոտանաւորը իր տաղտկալի միակերպութեամբ շարունակուած է մինչև վերջ: Աշակերտները

չառ անգամ ոչ թէ կարգում են այդ բառերը տառադատո, այլ ուղղակի անգիր սերտում, այնպէս որ ընթերցանութիւնը ըսկսւում է իսկապէս միայն ամբողջ այբուբէնը անցնելուց յետոյ, երբ նրանք հասնում են ամիսի յօդուածներին: Ուսուցիչներից շատերը նկատել են, որ «Մայրենի լեզուի» այբբենաբանը մինչև վերջ սովորած երեխաները չեն կարողանում այդ յօդուածները կարդալ, որովհետև վարժութիւնների քչութեան պատճառով հաստատ իւրացրած չեն լինում բոլոր տառերը: Վերջապէս, հին այբբենարանի մեծագոյն պակասութիւններից մէկն էլ այն է, որ կազմողը օգուտ չէ քաղում պատկերների տուած մանկավարժական յարմարութիւններից և ձեռքից բաց է թողնում մանուկների երևակայութեան վրայ ազդելու այս գորել միջոցը:

Նոր հրատարակուած «Այբբենարանը» հէնց առաջին հայեացքից չլայնում է պատկերների շատութեամբ. սկսած գրքոյի երեսից մինչև վերջին էջը պատահում ենք բազմաթիւ նկարների, որոնցից մեծագոյն մասը կատապուած է յաջող կերպով: Բայց զիսաւորն այն է, որ այդ պատկերները սերտ ներքին կապերով կապուած են այբբենական դաստաւութեան նոր եղանակի հետ, որին այս անգամ հետեւում է Աղայեանը, թողնելով իր նախկին մեթոդի ծայրայեղութիւնները: Դրանք ոչ թէ զարդ են և իլլւստրասիոն, այլ մանկավարժական միջոց, որով ձեռնարկը իրօք դառնում է «խնայնուսուցիչ մեծերի համար» և կարող է գործածուել ճիշտ որ «թէ մեծերի և փոքրերի համար», որպէս ուղում է կազմողը: Վարժութիւնները այստեղ սկսում են պատկերից, ոչ թէ ոտանաւորից—պատկերը թելադրում է բառ, բառը պէտք է վերլուծել հնչիւնների և ապա, առանց կողմնակի մէկի յուցմունքի, գտնել այդ հնչիւնների համապատասխանող գրերը պատկերի տակ տպած բառի միջից: Չէ կարելի ասել, որ Աղայեանի գործ դրած այս նոր, աւելի տպաւորիչ եղանակը բոլորովին նրա հնարածը լինի: Այբուբէնը պատկերների օգնութեամբ անցնելու միտքը բաւականին հին է երոպական դրականութեան մէջ, բայց՝ որչափ մեղ յայտնի է, հանգուցեալ նշանաւոր հրատարակիչ Պաւլենկովն էր առաջինը, որը բազմակողմանի շահագործեց այդ եղանակը և տուեց մի ձօն այբբենարան, ուր գրեթէ բոլոր վարժութիւնները կամ պատկերներից են բղխում կամ պատկերներով են վերջանում: Նրա այդ դործը պարզի աբժանացաւ Պաբլիի միջազգային յուցահանդէսին: Այնուհետև գրեթէ բոլոր ուսուբէն այբբենարանները հետեւում են, աւելի կամ պակաս աջողութեամբ, այդ օրինակին, և այժմ՝ ուսուաց (և երոպական) ման-

կալթարժական գրականութիւնը այդ տեսակ հրատարակութիւնների մի հարուստ հաւաքածու ունի: Մեր մէջ այդ պատկերաւոր դասաւանդութեանը դիմել են Աղայեանից առաջ Յովն. Տէր-Միրաքեանը իր «Այբբենարան առանց ուսուցչի կարգաւ սովորելու համար» (Ն.-Նախիջևան, 1897 թ.) և Յովն. Արաքաւջեանը իր «Մայրենի լեզուի» Ա. տարիի մէջ (Ալեքսանդրապոլ, նոր տպ. 1902 թ.), բայց եթէ համեմատելու լինենք Աղայեանի աշխատութիւնը այդ առաջին փորձերի հետ, կը համոզուենք, որ առաւելութիւնը նրա կողմն է: Յովն. Տէր-Միրաքեանը յաճախ ընտրում է այնպիսի պատկերներ, որոնց անունները կամ վերին աստիճանի անճոռնի են (եծեճա, փրկեալ) կամ զանազան գաւառաբարբառներում տարբեր են արտասանւում (ֆանեառ, զոնթիկ), իսկ Արաքաւջեանը՝ ազատ լինելով այդ տեսակ պակասութիւններից, ընթերցանական վարժութիւնների համար վերցնում է միօրինակ նմուշներ, մեծ մասամբ առածներ, որոնց բացատրութիւնն իսկ պիտի անտեղի կերպով շատ ժամանակ խլի ուսուցչից: Աղայեանը ամեն նոր տառից յետոյ նախ տալիս է նոյնպէս առանձին բառեր և ապա նախադասութիւններ, որոնց ընտրութեան մէջ սակայն աչքի է ընկնում աւելի մեծ ճաշակ և հասկացողութիւն մանկական բնութեան: Բայց մի էական տարբերութիւնը այն է, որ Աղայեանը հէնց չորրորդ երեսից, միայն մի տասններկու տառ տալուց յետոյ, արդէն հիւսում է ամփոփ փոքրիկ պատմութիւններ, որոնց բովանդակութիւնը հետզհետէ ճոխանում է և զանազանակերպւում: Այդ ամբողջական զրոյցները կարգալիս, մարդ հիացած է մնում մեր ծերունի մանկական գրողի երևակայութեան թռիչքների վրայ և այն հետքերն ունի վրայ, որով նա կարողանում է յափշտակել երեխայի ամբողջ հետաքրքրութիւնն ու խորին զուարճութիւն պատճառել նրան: Այստեղ է այն բանաստեղծական ցնցիչ ոյժը, որը կենդանութիւն է տալիս այրուբենական չոր ու ցամաք պարապմունքներին՝ զբոսւում է մանուկի ամբողջ փոքրիկ էութիւնը, աշխոյժ ազուարթութիւն է ներշնչում նրան, միշտ թարմ է պահում նրա ուղեղը և հետզհետէ կրկնապատկում է նրա ուսման փափաղը, քանի որ գիրքը ձեռք առնելուց զրկի՞թէ մէկ շաբաթ անց նա արդէն տեսնում է իւր ջանքերի ակներև արդիւնքները—կարդում է և հասկանում է ամփոփ պատմութեանքներ և ոտանաւորներ: Միայն իսկական տաղանդը կարող էր այնպիսի աջողութեամբ մի քանի տառերից հետզհետէ պատմութիւններ ստեղծել: Այսպիսով, սովորողը, մեծ լինի նա թէ փոքր, աննկատելի կերպով թէ այբուբենն է անցնում և թէ սկսում է կարգալ.

այնպէս որ վերջին տառը իւրացնելուց յետոյ նա կարող է ասել, թը իսկապէս գրագէտ է: Աղայեանը կարողացել է անբակտերի թելերով միայնել այբբենարանը ընթերցանութեան առաջին գրքոյկի հետ: Սակայն այս կղանակը բոլորովին նոր լինելով մեր դասարանական գրականութեան մէջ, նոյնպէս արդէն գործադրում է ուսուց ձեռնարկների մէջ: Մենք օրինակ, կարող ենք այստեղ մատնացոյց անել Բուբլիկովի և Գոլդեյնբերգի մի երկու տարի սրանից առաջ կազմած «Русская школа» դասագրքի Ա. մասի վրայ, ուր այբուբենական բաժնում արդէն 11 տառից յետոյ ղետեղում են ամփոփ ոտանաւորներ և պատմութեան: Սոհասարակ լեզուի ուսուցման այս սկզբնական աստիճանը արդէն բաւականաչափ ժշակում է թէ արեւմտեան և թէ ուսական մանկավարժական գրութեան մէջ և ուրախալի է, որ մեր ձեռնարկների կազմողներն էլ ետ չեն մնում այդ առաջադիմական շարժումներից: Այդ ճիւղի մէջ կան մի քանի նորութիւններ, որոնք դալիս են Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների դպրոցական կեանքից, ուր մի առանձին ուշադրութիւն են դարձնում, հնչիւնական տպաւորութիւնների հետ միաժամանակ, և տեսողական տպաւորութիւնների վրայ, բայց այս հանգամանքը բացատրում է անգլիական լեզուի յատկութեամբ, ուր բառի արտասանութիւնն ու գրութիւնը իրարից խիստ տարբերում են:

Շարունակներ մեր համեմատութիւնը մի կողմից Աղայեանի և միւս կողմից՝ Յ. Տէր-Միրաքեանի ու Յ. Արաբաջեանի ձեռնարկներին: Բացի վարժութեանց օրինակների կենդանութիւնից և գեղեցկութիւնից, ամեն այբբենարանի էական մասն է կազմում տառերի նպատակայարմար յաջորդական դասաւորութիւնը: Անհրաժեշտ է մի կողմից՝ հետեւել հնչիւնաբանական, միւս կողմից՝ զծագրական օրէնքներին, աչքի առաջ ունենալով միշտ մանկավարժական հիմնական սկզբունքները, որ աշակերտները անցնեն հեշտից դէպի դժուարը, պարզից դէպի բարդը, որոշից դէպի անորոշը: Այս տեսակէտից աւելի կանոնաւորութիւն ենք զանում Աղայեանի ձեռնարկի մէջ: Նրա դասաւորութեան մէջ տառերը իրար հետեւում են հետեւեալ կարգով. մ, ա, տ, շ, ի, ս, բ, ու, ն, կ, ը, է, ե, դ, ո, խ, չ, ք, ղ, հ, աւ, և, իւ, գ, լ, յ, պ, բ, գ, ց, վ, ծ, ո, թ, ջ, փ, ոյ, ժ, ճ, օ, ձ, ևօ, ևա, ֆ: Այս դասաւորութեան մէջ էլ կան թերութիւններ, բայց անտարակոյս աւելի քիչ, քան թէ պ. պ. Արաբաջեանի և մանաւանդ Տէր-Միրաքեանի դասաւորութեանց մէջ. օրինակ. աշակերտների համար բառի միջից առանձնացնել և գրել մ հնչիւնը աւելի դժուար է, քան պ, շ՝ աւելի

դժուար է, քան թէ Լ, ծ՝ աւելի դժուար, քան թէ յ, օ-ն աւելի դժուար, քան թէ ունեւորակ մեր բոլոր այբբենարանների այս կողմը դեռ բաւականին թերի է: Յայտնի է, Յայտնի է, ինչո՞ւ—գուցէ սա միայն մի պատահականութիւն է—Աղայեանը բաց է թողել իր ձեռնարկի մէջ այն վարժութիւնները, ուր յ տառը կամ էջ հնչում (ծառայ) կամ հնչում է որպէս հ (յարկ, յարմար): Չը լինի թէ այս հանդամանքը պիտի բացատրենք որեւէ սկզբունքային հայեցակէտով, որովհետեւ մի տեղ նա (երես 18) իմացաւ բայը գործ է ածում առանց յ-ի *): Տառերի նպատակայարմար դասաւորութեան դժուարութիւնները աւելի մեծանում են, երբ ձեռնարկ կազմողը Աղայեանի պէս ուզում է միաժամանակ սովորեցնել թէ կարդալ և թէ գրել: Այս դէպքում մանաւանդ գլխատառերի գրչագրական առանձնայատկութիւնները մեծ չփոթութիւն են մտցնում: Մեր այբուբէնի այնպիսի գլխատառերը, ինչպէս են Ծ, Է, Հ, Չ, պահանջում են, որ երկխայի մասերը արդէն բաւականաչափ վարժուած լինեն գրութեան արուեստի մէջ: Բայց հէնց այս տառերն են, որ ուսուցման սկզբումն են դրուած Աղայեանի նոր ձեռնարկի մէջ:

Եթէ տառերի յաջորդական դասաւորութիւնը Աղայեանի մօտ չենք կարող էլ ըստամենայնի բաւարար անուանել, պիտի խոստովանուենք, որ նա ուրիշ ճանապարհով աշխատել է հեշտացնել գրել սովորողի գործը, ամեն մի տառի տակ գետեղելով նրա գրչագիր ձևը և ապա մի քանի ձեռագիր բառեր: Յ. Արաբաջեանն էլ ունի այս նորութիւնը, որը հնարաւորութիւն է տալիս ամեն մէկին չը դիմելու գեղագրութեանց օրինակներին, բայց նրա մօտ բերած բառերի թիւը անհամեմատ քիչ է: Կարելի է իհարկէ վիճել, թէ լաւ է արդեօք Աղայեանը ընտրել այս կամ այն տառի ձեռագիր ձևը (օրինակ գլխատառ Զ, Ծ, Ը-ի պոչը ուրիշ է, քան թէ Լ-ի, Զ-ի), նոյնպէս կարելի է ցանկութիւն յայտնել, որ տուած օրինակների մէջ բառերի առանձին տառերը իրար հետ միացրած լինէին, ոչ թէ բաժան-բաժան, բայց չը պէտք է ծածկել, որ մեր նորագոյն գրութեան եղանակը դեռ չատ անմշակ է և անհաստատ: Սրանով է միայն բացատրուում այն խիստ տարբերութիւնը, որը նկատ-

*) Աղայեանի աչքի տակից սպրդել է նաև այն, որ նա չէ տալիս Տ, Ի, Բ, Ը, Զ, Գ, Դ, Յ, Ժ, Ծ ձեռագիր գլխատառերը, մի-երկու տեղ պատմութեան մէջ գործ է ածում այնպիսի տառեր, որոնք չը կան նախորդ վարժութիւնների մէջ— (18 երես—Բէրլէհէմ, 20—Կաթ, մինչդեռ Բ-ը գալիս է միայն 22 երեսին, նոյնպէս § 46 «ճախարակի երգ»-ի մէջ ձէթ, օրը, մինչդեռ ձ և օ գալիս են § 47-ի մէջ:

ւում է Աղայեանի և Արարաջեանի մօտ թէ մի քանի տառերի (ե, է, ճ, չ, մանաւանդ գլխատառերի) գծադրութեանց մէջ, թէ ընդհանրապէս մէկի և միւսի գրութեանց ընաւորութիւնների մէջ: Աղայեանի գրերը աւելի լայնանիստ են և պահանջում են, որ գրողը բառեր գրելիս յաճախ բարձրացնի գրիչը թղթից և ընդհատի գծի ընթացքը, Արարաջեանը ընդհակառակ՝ երկարացնում է տառերը աւելի ուղղահայեաց ուղղութեամբ և ամեն մի գիր աշխատում է կազմել անընդհատ գծից, Վերջերս զեղազերութեան նորագոյն մեթոդիկաները աւելի հետևում են գրութեան երկրորդ եղանակին, որն անկասկած մեծ յարմարութիւն է ներկայացնում արագագրութեան համար:

Մենք մի փոքր երկարօրէն խօսեցինք Աղայեանի «Պատկերաւոր Այբբենաբանի» մի երկու թերութիւնների մասին՝ աչքի առաջ ունենալով, որ այս ձեռնարկը շատ է տարածուելու մեր ժողովրդի մէջ և երևի շուտով լոյս կը տեսնի երկրորդ հրատարակութիւնը, ուր ցանկալի է այդ թերութիւնները վերացուած տեսնել: Այն ջերմ ընդունելութիւնը, որ Աղայեանի նոր աշխատութիւնը արդէն դանում է ամեն կողմից, խնդրին արդէն լաւ ապացոյց է նրա առաւելութիւնների: Գուցէ մի քանիսի աչքին պակասութիւն երևայ այն, որ կազմողը ամեն տեղ ունի ձայնաւորների առաջ սղում է լուով ըստ իւր ընդունած ձևի, բայց եւ ինքս միշտ կողմնակից լինելով այդպիսի սղման՝ հետո և՛ մի այդ մի թերութիւն համարելու մարից: Կարծում եմ, որ վերջապէս ժամանակ է ճանաչել այդպիսի ուղղագրութեան հիմնաւորութիւն ու կարեւորութիւնը: Մնում է միայն ցանկանալ, որ Աղայեանի ձեռնարկը տպուի այնպիսի քանակութեամբ, որ ճիշտ որ լինի այն կողմնակց այբուբենը, որի մասին երազում են մեր ժողովրդի համար գրողները:

ՍՏ. ԼԻՍ.

Իվան Վազով. «Լճի ՏԱԿ», վէպ բուլղարների կեանքից: Աղատութեան նախընթաց օրը, ուսերէնից թարգմ. Յովհ. Արարաջեան. 1903 թ., Ս.-Պետերբուրգ. զինն է 80 կոպ.

Թուրքիան բռնակալութեան դատական երկիրն է: Անոր լրծին տակ ապրող ամենախաղաղ ժողովուրդները՝ անողորմ հաւածանքներէ հոգինին բերանին և կա՛ծ՝ դիմեցին վերջապէս փրկութեան միակ միջոցին—ապստամբութեան ու ձեռք բերին իրենց ազատութիւնը: